

ԱՆՅՐ ԷԹՈՌՈՒՄ
ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ



ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սի գեղեցիկ ու հաճելի ավանդույթ է դարձել Ամանորի երեկոյան տոնակատարությունը Մայր Աթոռում: Դա մի ուրույն, ինքնատիպ ու խորհրդավոր երեկո է, որն ի մի է հավաքում Հայ Առաքելական Եկեղեցու գրեթե ողջ միաբանությանն ու սպասավորներին: Հայաստանի և արտասահմանի այս կամ այն ծայրերից, նստեցնում մի ընդհանուր սեղանի շուրջ, բարձրացնում սիրո ու բարեկամության բաժակները և հայ հոգևոր դասի միաբերան օրհնանքն ու մաղթանքները սփռում մեր ազգի գալիք տարվա անցնելիք ճանապարհին: Հոգևորականաց դասի հետ միասին երեկոյին իրենց մասնակցությունն են բերում Գևորգյան Հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմն ու ուսանողությունը:

Այդպիսին էր նաև 1999 թ. Ամանորի երեկոն: Կրկին, ինչպես միշտ, ճաշակով ու ներգաշնակորեն էր զարդարված Հոգևոր ճեմարանի նախկին շենքի հանդիսությունների դահլիճը, որտեղ և պիտի տեղի ունենար Սուրբ Օննոյան և Ամանորի տոնակատարությունը: Ամբողջովին պահոց կերակուրներով և ուտեստներով զարդարված սեղաններն սպասում էին իրենց հյուրերին:

Ժամը ճիշտ 20.00-ին դահլիճ են մտնում Սրբազան Հայրերը, թեմակալ առաջնորդները, վարդապետները, արեղաները, քահանաները, սարկավագները, ճեմարանի սաներն ու դասախոսները, տեսչության անդամները: Ամանորի հանդիսությունը նախագահում էր Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Սրբազան Հայրը հաճելի անակնկալ մատուցեց ներկաներին: Ամսպասելիորեն վերցնելով հեռախոսափողը՝ հեռաձայնեց Վեհափառ Հայրապետին, որպեսզի նրա օրհնության խոսքով սկսվի Ամանորյա տոնակատարությունն ու հանդիսությունը: Գարեգին Սրբազանը ողջ միաբանության ու ներկաների անունից շնորհավորեց Ամենայն Հայոց Հայրապետի Սուրբ Ծնունդն ու Ամանորը, մաղթեց շուտափույթ ապաքինում, քաջառողջություն և բարի վերադարձ Մայր աթոռ Ա. Էջմիածին: Վեհափառ Հոր փոխադարձ շնորհավորանքից ու օրհնությունից հետո, Գարեգին Սրբազանն Ամանորյա հանդիսությունը բացված համարեց:

Ամանորի տոնակատարությունն սկսվեց Տերունական աղոթքով: Ապա Հոգևոր ճեմարանի երգչախումբը, խմբավար Ռուբեն Շարքաթյանի ղեկավարությամբ, կատարեց ճեմարանի քայլերգը: Այնուհետև ներկաներին ուղղված շնորհավորական խոսքով հանդես եկավ ճեմարանի փոխտեսուչ Բաբկեն արքեպ. Սալբիյանը:

«Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Սրբազան Հայր, գերաշնորհ հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, հարգելի անդամք Գերագույն Հոգևոր խորհրդի, պաշտոններն ունեցող Մայր Աթոռի, հարգարժան դասախոսներ և շատ սիրելի սաներ Գևորգյան Հոգևոր ճեմարանի,

Միա այսօր կանգնել ենք հին և նոր տարին շողկապող ժամանակի մեջ, հուշերով ճանապարհում ենք հին և երազանքներով դիմավորում նոր տարին:

Սակայն այս հավերժական և անփոփոխ կյանքի մեջ էականը ոչ թե ժամանակի փոփոխությունն է մարդու համար, այլ կյանքի և մարդու փոփոխությունը, քանզի տարին նորանում է մարդու նոր հավատով, նոր

խոհերով և նոր գործերով: Ինչպես ասում է մեր եռամեծար վարդապետներից Գ. Տաթևացին. «Ամենայն կեանք մեր անկայուն և՛ շարժական է, և՛ ոչ մնացական: Ոչ մեծութիւն, ոչ փառք, ոչ ուրախութիւն, ոչ հեշտութիւն և ոչ այլ ինչ, այլ ամենայն փոփոխի և գնա որպէս հին տարին գնաց»:

Արդարև ժամանակի մեջ մարդն անցնում է հավերժի գիրկը, բայց մնում է մարդու գործը՝ որպէս կոթող-հուշարժան սիրագործության: Մարդու գերագույն կոչումն ու պարտականությունն է հավերժական այդ ժամանակը լցնել ազնիվ գործերով, ստեղծագործ աշխատանքով՝ հույսը վերածելով կյանքի, գործի, իրականության:

Բարոյական սնանկությունը, որը սնանկություններից մեծագույնն է, առաջ է գալիս ժամանակի վատնումով: Պատահական չէ, որ Պողոս Առաքյալն ազդարարում է մեզ. «Գնեցեք ժամանակս», քանզի ժամանակ վաճառող մարդը անմիտ է, իսկ իմաստուն մարդը կգնի այն:

Արդկային կյանքի արժեքը ապրված տարիների մեջ չէ. «Ոչ քով ամացն չափեսցի», այլ հոգևոր իմացական կատարելության մեջ է:

Եվս մի քանի ժամ, և ժամացույցները աշխարհով մեկ պիտի ազդարարեն, որ 1999 թվականը մտել է իր պարտականությունների մեջ, և մեզ համար բացվել է կյանքի նոր էջ, էջ, որը մեզ լցնում է Ամանորի խոհերով, երազանքներով, գործունեության ու աշխատանքի նոր հեռանկարներով:

Օգտվելով ինձ ընձեռված առիթից, ցանկանում եմ շնորհավորել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Նոր տարին և ասել. Սիրելի Վեհափառ, մեր հոգիները ծարավ են այս գիշեր Չեր ծայնին ու խոսքին, որոնք մեզ մշտապես լցնում են հայրենյաց շնչով ու Ա. Եջմիածնի տեսիլքով: Թույլ տվեք ցանկալ Չեզ քաջառողջություն, երկար տարիների եկեղեցաշեն և ազգանվեր գործունեություն՝ ի փառս Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի:

Թույլ տվեք շնորհավորել բոլորիդ Նոր տարին, ցանկալ Չեզ, որ 1999 թվականը դառնա բոլորիդ համար վերանորոգության, հոգևոր զարթոնքի և իղձերի իրականացման տարի: Թող Աստված մեր փառավոր անցյալը մեր միջոցով վերածի նույնքան փառավոր ներկայի և ապագայի, թող ժամուց և ժամանակաց Արարիչը՝ զմիւս ամս որ գալոց է, խաղաղութեամբ և պարագայց ամօք պահեսցէ»:

Այս բարեմաղթություններով, Նոր տարվա խոհերով և Ա. Ծննդյան հոգեմորոգ ներշնչումներով դիմավորենք հույսի և կյանքի կրկնակի տոները՝ Ամանորը և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծնունդը:

Շնորհավոր Նոր տարի»:

Սուրբ Ծննդյան հետ խորհրդանշաբար տոնակատարվող Հիսուսի Սկրտությունն էր արտացոլված երգչախմբի կատարմամբ հնչած «Ով Ջարմանալի» հոգեպարար շարականում: Հաջորդ շարականը՝ «Այսօր ծայնն հայրական»-ը, նույնպես տպավորիչ էր ու զեղեցիկ: Շարականների երգեցողությունից հետո միաբանության անունից ելույթ ունեցավ ճեմարանի եկեղեցական երաժշտության դասախոս Արշակ աբեղա Խաչատրյանը.

«Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Արքազան Հայր, գերաշնորհ հայրեր, միաբանակից ավագ և կրտսեր եղբայրներ, սիրելի սաներ և պատվարժան ներկաներ.

Այս գիշեր հավիտենականության սիրտը կրկին անգամ բարախյունով ազդարարելու է 365 օրերի վախճանի և նոր օրերի ժամանման մասին: Ոչինչ չկա արտասովոր ու արտառոց այսօրվա, Ամանորյա այս երեկոյի մեջ՝

համեմատած մյուս երեկոներին: Ամեն ինչ նույնն է՝ բացառությամբ տոնական զարդարանքների ու պաճուճանքների: Կա նաև մեկ ուրիշ համեմատանք. որ միավորում է ամենքիս ու լծում սրբազան մի պարտականության իրականացման: Ամանորյա երեկոն գիշերն է տարվա, և ամեն գիշեր. երբ մենք կիսարթուն ու կիսաքուն գլուխներս բարձրին հակած օրվա դեպքերն ենք վերլուծում ու քննարկում՝ վաղվա ամելիքները ծրագրելու համար. այսօր ևս կատարելու ենք նույնը, այս անգամ արդեն անցած ու գալիք տարիների վերաբերմամբ:

Տարին ավարտվում է: Տեսել ենք առևտրական հաստատություններ՝ հանրախանութից մինչև ամենափոքրիկ տաղավարը, որոնք նայում ու նայում են իրենց հաշվեմատյանները. հաշվում օգուտն ու վնասը. հնարավոր եզրակացություններ անում՝ ապագայում էլ ավելի արդյունավետ դարձնելու իրենց գործը: Ահա մենք ամենքս այսօր բացելու ենք մեր բանից. գործոց և խորհրդոց մատյանները: Հաշվետվություն է հոգու, կյանքի հաշվետվություն: Ի՞նչ տվեց մեզ անցնող տարին:

Միջազգային ու մասնավորաբար ներազգային կյանքի ասպարեզներում շոնդալից ու աղմկոտ իրադարձություններ տեղի ունեցան: Պայքար ազդեցության ոլորտների համար, մախազահական ընտրություններ, դեպքեր ու դեպքեր: Սակայն, փառք Աստուծո, «յաղազս ամենայնի փառք», որ խաղաղությունը կրկին վերանվաճվեց:

Մերո ընդ մերո միմյանց հաջորդող ուրախությունների ու տրտմության ալիքների հոսքեր տեղի ունեցան նաև մեր Մայր Եկեղեցում:

Ամենքիս համար ցավալիորեն Մայր Աթոռից երկար ժամանակով բացակայեց Վեհափառ Հայրապետը: Ամանորյա այս երեկոյին ամենքիս բաղձանքն է, որ նոր տարին շուտափույթ ապաքինում ու նորոգ կամք ու եռանդ բերի մեր Հոգևորապետին՝ հովվելու իր հավատացյալների փոքրիկ հոտը: Վեհափառը որպես «Հովիվ քաջ» իր անձը դրեց «ի վերայ ոչխարաց»՝ նույնիսկ ի գին իր առողջության: Եվ Աստված գալիք տարում թող որ «արքայութիւնն երկնից» ծաղկեցնի Վեհափառ Հայրապետի հոգում:

Նշանակալի է, որ Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ, կաթողիկոսության գործերը վարելու համար, կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ նշանակվեց Գառնգին արքեպիսկոպոս Ներսիսյանը: Մեր Ամանորյա շնորհավորանքները գերաշնորհ Սրբազան Հորը՝ Նոր տարվա առթիվ, և պատրաստակամությունը, «ոգի ի բոի» լծվելու Մայր Եկեղեցու շենացման սուրբ գործի իրականացմանը:

Շնորհավորանքներ նաև մեր միաբանակից ավագ ու կրտսեր բոլոր եղբայրներին. Գևորգյան Հոգևոր ճեմարանի մեր եղբայր-սաներին, Մայր Աթոռի բոլոր պաշտոնյաներին ու ծառայողներին:

Շնորհավոր Ամանոր:

Այնուհետև հնչեց հաջորդ՝ «Փրկչին ծնունդը» երգը, որի խորքում անթեղված լուռ ու սուրբ գիշերվա միջից շողարձակվում էր Հիսուս Քրիստոսի Ճննդյան ավետիսը:

Ապա Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմից հատված ընթերցեց ճեմարանի Զ լսարանի սան Վաղարշակ ուրարակիր Ծատուրյանը՝ ասես աստիճանաբար էլ ավելի ջերմացնելով տիրող հոգևոր մթնոլորտը: Հոգևոր այս մթնոլորտին ավելի խիճ ու շունչ հաղորդելու համար, երգչախմբի կողմից հնչեց «Խնջույքի երգ»-ը՝ փառաբանության խոսք ուղղելով հայոց հողին, հայոց խաղողին ու հայոց գինուն:

Այնուհետև ուսանողության անուցից ներկաներին դիմեց և Սուրբ Ծննդյան ու Սմանորի շնորհավորանքներ փոխանցեց Զ լսարանի սան Վաղարշակ ուրարակիր Ծատուրյանը:

«Գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, բարեշնորհ սարկավազներ, հարգելի դասախոսներ և հյուրեր:

Արարչագործության թագն ու պսակի՝ մարդու համար ի վերուստ սահմանված իմաստավորված ժամանակը ժողովողի լեզվով հնչում է հետևյալ կերպ. «Ամեն բանի ժամանակը կա, և աշխարհում ամեն գործ ունի իր ժամանակը» /Ժող. Գ. 1-3/:

Մարդկային կյանքի ալեկոծ օվկիանը լի է Անժամանակի կողմից իմաստավորված ժամանակով: Այս մտորումներով լցված, սրտի և հոգու թրթռումներով, ապագայի փակ դռների առջև կանգնած, յուրաքանչյուր մարդ իր խղճի թելադրանքով ու Ամենատես Դատավորի արդար դատատանանի երկյուղը սրտում պիտի փորձի խորհրդածել, ոգևորվել ու ներշնչվել, հույսեր փայփայել գալիքի պայծառ արշալույսի հետ: Եվ չպետք է մոռանալ, որ մարդկային հոգու ամեն մի սերմանված քաղցր պտուղ մի սքանչելի պահ է՝ ժամանակն ու կարգավորությունը սահմանող Բարձրյալի անդաստանում:

Մի քանի վայրկյաններ ևս, և երկրագնդի այս տարեշրջանի զանգերի բոմբյունների ներքո պատմության մեջ կծնվի ևս մեկ էջ, հավերժի մի ակնթարթ 1999 թվականը: Այն իր կնիքն է թողնելու պատմության ուղեծրի վրա դառնալով պատմության շղթայի մի օղակը, անսահման ժամանակի իմաստավորված մի հատվածը:

Ամեն տարի, ժամանակի այս տոնին, պիտի ներանձնանալ, հաշվետվություն կատարել խղճի առջև, հիշել մեր անցյալ կյանքը, ուրախանալ հաջողություններով, ափսոսալ կրած հուսախաբությունների համար, զղջալ կատարած թյուր գործերի համար, սրբազան ու վեհ զգացումներով նորոգված կյանքով ոտք դնել նոր տարվա սեմին մեկ վճռականությամբ՝ հավատարմորեն, անձնուրացաբար նվիրվել և անմնացորդ սիրով խոնարհաբար ծառայել ազգին ու եկեղեցուն:

Ամեն նոր տարվա հետ առաջադեմ մարդկության իղձն ու ցանկությունն է՝ տեսնել խաղաղության նավահանգիստը, համերաշխությունը ազգերի միջև և համբերությունը չարչարակիր ժողովուրդներին:

Հուսառատ ակնկալություններով, հոգու լաբերով և ներքին զգացողությամբ ներկայությունն ենք նշմարում Վեհափառ Դայրապետի: Եվ, հանուն ուսանողության, ի խորոց սրտի շնորհավորում ենք ազգքնտիր Դայրապետի Նոր տարին, ցանկանում արևշատություն, քաջառողջություն, երկա՜ր-երկար տարիների բեղմնավոր կյանք: Մեր հոգու կանչով հավաստիացնում ենք, որ Չեր շուրջ համախմբված կանք հավատքով, ազգասիրությամբ, և եկեղեցասիրությամբ լցված մի խումբ երիտասարդներ քաջ գիտակցում են հոգևորականի բարձր կոչումը՝ Աստծուն ու ազգին հնազանդորեն ծառայելը:

Հավատացած եղեք, մեզ համար ներշնչանքի և ոգևորության աղբյուր է այն հանգամանքը, որ նույնիսկ Վեհափառ Դայրապետը հիվանդության պահին չի թուլացնում զգոնությունը, կորովը և բժախնդրությունը՝ դեկավարելու և պայքարելու Դայ Եկեղեցու և ժողովրդի կյանքը խաթարող բոլոր շեղումների դեմ՝ առարկայացնելով և շոշափելի դարձնելով Տերունական այն պատգամը, ըստ որի՝ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»:

Մեր երախտիքի և շնորհավորանքի խոսքերն ենք հղում նաև ձեզ, միաբան

հայրեր և սիրելի սարկավագներ, որ ձեր հոգեւորորդ պատգամներով լուսավորեցիք մեզ: Բարեմաղթանքներով շնորհավորում ենք մեր սիրելի տեսչությանը, դասախոսական կազմին, որոնք իրենց ջանադիր աշխատանքով պայծառացրեցին մեր իմացականությունը և տվեցին մեզ գիտության բանալին: Շնորհավորում ենք նաև բոլոր-բոլորին:

Թող գալիք նոր տարին՝ 1999 թվականը, լինի մեր հոգիների նոր երջանկության տարի, մեր ժողովրդի համար լույսի ու խաղաղության, Հայաստանյայց Առաքելական Ա. Եկեղեցու համար հոգեշահ աշխատանքի ու հոգևոր վերազարթոնքի տարի»:

Ապա երգչախմբի կատարմամբ հնչեց «Կենաց երգ»-ը, որի տողերում վեր է հանվում հայրենիքի կենացը խմելու նվիրական ու անկեղծ ցանկությունը, խոսվում նրա երջանկության, հավերժության մասին:

Այնուհետև սկսվեց կաղանդեցների ընթերցումը, որին, ինչպես միշտ, սրտի անհամբեր թրթիռով են սպասում ներկաները: Դիպուկ ու սուր կատակների «հրե բոցերից» անմասն չմնացին ո՛չ ճեմարանի դասախոսներն ու տեսչության անդամները, ո՛չ քահանաներն ու արեղաները, ո՛չ վարդապետներն ու Սրբազան Հայրերը և ո՛չ էլ անգամ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Իսկ ծիծաղն իրոք հոգեբուխ էր ու համընդհանուր: Պակաս հետաքրքրական ու ցանկալի չէր կաղանդեցների ընթերցումից հետո կատարված վիճակահանությունը: Յուրաքանչյուր ոք մի ներքին փափագ ուներ Ամանորի այդ գիշերը ինչ-որ հուշանվեր ստանալու:

Վիճակահանությունից ու շահումներից հետո երգչախմբի կատարմամբ հնչեց մեր մեծ Հայրապետի՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքը հավերժացնող «Էջ Սիածինն ի Զօրէ» շարականը:

Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը, օրհնության խոսքից ու շնորհավորանքներից հետո, հանդիսության ավարտին ընթերցեց Սուրբ Էջմիածնի միաբանությանն ուղղված Գարեգին Ա Կաթողիկոսի հայրական ուղերձը: Նամակում մասնավորապես ասվում էր.

«Սիրելի միաբանակից եղբայրներ և զաւակուներ,

Արքեպիսկոպոսք, Եպիսկոպոսք, Վարդապետք, Արեղայք, Ասրկաւագուներ,

Առաքին անգամ ըլլալով Նոր տարին և մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ա.

Ճննդեան տօնը ձեզի հետ միասին տօնախմբելու երջանկութենէն զրկուած եմ: Ինչպէս գիտէք, առողջական պատճառներով կը գտնուիմ Նիւ Եորք՝ դարմանումի ընթացքը շարունակելու և ամբողջացնելու համար:

Խորապէս կը ցաւիմ որ այս զուարթագին և երջանկաբեր օրերը պիտի ըլլամ զրեթ առանձին, վերոյիշելով անցնող երեք տարիներու այն հոգելից պահերը, զորս ապրեցայ ձեզի հետ Մայր Աթոռի վանական աւանդութեանց համաձայն: Վստահ եմ, որ յառաջիկային կը վերազտնեն այդ երջանիկ պահերը:

Այս տարի ուզեցի իմ հայրական սիրոյ որպէս արտայայտութիւն ուղղել ձեզի այս գիրը՝ որպէս շնորհաւորութիւն և բարեմաղթանք տօնական այս օրերու առթիւ: Ի խորոց սրտի, կ'աղօթեմ առ մարդացեալն Աստուած, որ ձեր բոլորին պարգեւէ լաւագոյնը ըստ կամաց Իւրոց և վասն շինութեան և բարեկարգութեան Եկեղեցւոյս Հայաստանեայց և հոգեւոր Տան մերոյ՝ Արքայ Էջմիածնի:

Այո, կը զգամ, ու վստահ եմ նաեւ, որ դուք կը զգաք, կը գտնուիմք վճռական, ճակատագրական օրերու դիմաց թէ՛ որպէս ազգ, թէ՛ որպէս Եկեղեցի

և թե՛ որպէս պետութիւն՝ ազատ ու անկախ Հանրապետութիւն: Ապագայի սերունդները մեզ պիտի դատեն ներկայի մեր արարքներէն, կատարած գործերէն, ինչպէս նաեւ մեր կողմէ անտեսուած ու չկատարուած գործերէն:

Իմ այս տարուայ մտերմական խօսքը չեմ ուզեր, որ ըլլայ ընդհանուր, սովորական իմաստով «յաւուր պատշաճի» խօսք մը: Չայն կը մասնաւորեմ և կ'ուղղեմ մեր միաբանութեան երեք գլխաւոր դասակարգումներուն:

ա) Եպիսկոպոսաց դասուն, Միաբանութեան աւագ եղբայրներուն, որոնք եկեղեցական պարտաւորութեանց լրումը ունին իրենց մէջ՝ տրուած եկեղեցւոյ վերին իշխանութեան կողմէ: Ըլլայ վանական, ըլլայ թեմական, ըլլայ դաստիարակչական մարզերու մէջ՝ եղէք ամբողջանուէր, անձանձիւ ծառայութեամբ, կեանքի բարի ընթացքով օրինակ հանդիսանալով փոքրերուն: Ժողովրդական ծառայութեան մէջ, թեմական շրջանակներու մէջ թող հաւատացեալները զգա՛ն ձեր հայրախնամ ներկայութիւնը և առոյգ գործունէութիւնը:

բ) Վարդապետաց դասուն, որոնք գլխաւորաբար կը վարեն կրթական, դաստիարակչական, գրական, վանական, վարչական և միջ-եկեղեցական գործեր: Եռանդուն, յարատեւ և տեսլապաշտ գործունէութեան շրջանն է այս, ձեր հոգեւորական կեանքին մէջ: Արժեցուցէք զայն լաւագոյն ձեռով: Ամիսոնք աշխատանքով յառաջ տարէք ձեր կրթական, դաստիարակչական գործը, Գեորգեան Հոգեւոր Ծննդարանի, Բրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնի և այլ ճանապարհներով: Ոյժ տուէք գրական, գիտական, մանկավարժական ուսումնասիրութեանց: Մի՛ գոհանաք անմիջականով, պարագայականով, մակերեսայինով: Օրագիր ունեցէք, յօդուածաշարքերով ի յայտ եկէք և հետապնդեցէք վարդապետական աստիճանի բարձրութեան համապատասխան աշխատութիւնները: Ուսանողներուն հանդէպ սէր, նախաձեռնանդորդութիւն ցոյց տուէք մեծ եղբայրներու նման: Մեր ժողովուրդը ստիպողական կարիքը ունի՝ իր այսօրուան կեանքի պայմաններու լոյսին տակ հաղորդ դառնալու Բրիստոնէական ճշմարտութեանց և մեր հայրերու ուսուցումներուն: Դուք էք կամուրջը անոնց և իրենց միջև:

գ) Աբեղայից դասուն, որոնք կը պատրաստեն իրենց վարդապետական աւարտաճառերը և կը վարեն վարչական կամ վանական այլ գործեր: Ես թուլացած կը գտնեմ աւարտաճառերու պատրաստութեան գործը: Այն, ինչ որ տեսայ անցնող երեք-չորս տարիներու ընթացքին, զիս չեն բաւարարեր: Հայց. եկեղեցւոյ վարդապետի կոչումին և վարկին համապատասխան գործեր պէտք է ստեղծել: Մեր ժողովուրդի կարիքներուն համապատասխան նիւթեր պէտք է նաեւ ընտրել: Ապա խորանալ և տարածուիլ, որպէսզի նիւթերու ամբողջական տարողութիւնը ընդգրկուի:

Այս գլխակարգումին տակ նկատի ունիմ նաեւ այն սարկաւազները, որոնք աւարտած են ճննարանը և կը պատրաստուին արեղայութեան: Հարկ է վերանորոգեալ գիտակցութեամբ և պրկուած կամքով ու հետեւողական լուրջ աշխատանքով պատրաստեն իրենց սարկաւազական աւարտաճառերը: Այս կանուխ տարիքին՝ անտարբերութիւն, թուլութիւն կամ ծուլութիւն թուլատրել՝ կը նշանակէ մեր երիտասարդ տարիքի ոգին սպաննել: Այստեղ Ամերիկայի մէջ ուսանողներու հանդիպեցայ, որոնցմէ ոմանք բժշկութիւն, ուրիշներ իրավաբանութիւն, ուրիշներ ճարտարագիտութիւն կը կարդան: Երբ տեսայ իրենց գործածած հսկայածաւալ և բազմաթիւ հատորները, զարմացայ: Շատեր մինչեւ առաւօտեան ժամը մէկ կամ երկու կ'աշխատին՝ առաւօտ կանուխ ալ դպրոց երթալու համար: Չեր յաջողութեան գաղտնի բանալին շարունակական և ծրագրեալ ընթերցումի, սերտողութեան մէջ կը կայանայ: Ժամանակը մի՛

վատնեք: Աստուած է զայն տուողը: Ժամանակը սպաննելը տեսակ մը ոճիր է: Ուրիշ կորստած բաներ կը վերագտնուին. բայց ժամանակը՝ ոչ: Ան ամենէն թանկագին տուրքերէն մէկն է Աստուծմէ:

Հայրական այս խօսքը ցարդ ուղղուած է ձեր աշխատանքին: Կ'ուզեի նաեւ իմ հայրական յորդորը ուղղել ձեզի աղօթքի և պաշտամունքի ու կարգ-կանոնի մասին:

Առանց ամենօրեայ աղօթքի՝ չկայ հոգեւորական: Առանց ամենօրեայ հասարակաց աղօթքի՝ ոչ միայն չկայ հոգեւորական, այլ և չկայ Միաբանութիւն: Ասոնց լաբայիսեան ճշմարտութիւններ են: Ուստի կը սպասեմ ձեր բոլորէն, որ ժամերգութիւնները, Սուրբ Պատարագը և այլ արարողութիւնները ձեր ամենօրեայ կեանքին մաս կազմեն: Մեր ժողովուրդը Ափիւղքի մէջ կը հաւատայ, որ իր Մայր Աթոռ Ա. Էջմիածնի մէջ ամէն օր վանական հայրերը աղօթք կ'ընեն իրենց համար: Մի՛ յուսախաբ ընէք այսպիսի հաւատացեալ և հաւատարիմ ժողովուրդը:

Խօսքս փակելէ առաջ, կ'ողջունեմ նաեւ Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր հորհուրդին և անձնակազմին, պաշտօնութեան անդամները՝ մաղթելով, որ զալիք Նոր տարին դառնայ աղբիւր բարութեան իրենց և մեր Մայր Աթոռին համար:

Թող 2000-ամեակի վերջին տարին՝ 1999-ը, ըլլայ հոգեկան վերանորոգութեան տարի մը մեր բոլորի համար: Կը խնդրեմ, որ զիս յիշէք ձեր աղօթքներուն մէջ՝ քաջ գիտնալով, որ դուք միշտ կը մնաք ներկայ իմ աղօթքներուն մէջ ուր ալ գտնուիմ:

Շնորհաւոր Նոր տարի և բարի Կաղանդ:

Շնորհավոր Ա. Շնունդ:

Հայրական ջերմ սիրով՝

ԳԱՐԵԳԻՆ Ա

Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Հանդիսութիւնն ավարտվեց Տերունական աղոթքով և Պահպանիչով:

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹԹՈՒՆՅԱՆ

Դ լսարան

ՎԱՂԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Զ լսարան